



Հարգելի՛ փաստաբաններ,

ՀՀ փաստաբանների պալատը հայտարարում է հանրային պաշտպանի գրասենյակի Լոռու մարզը սպասարկող քրեաիրավական մասնագիտացմամբ հանրային պաշտպանի թափուր հաստիքի առկայության մասին:

Հաշվի առնելով հանրային պաշտպանների թեկնածուների համար 2020 թվականին անցկացված մրցույթի արդյունքներով ձևավորված հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակում համապատասխան աշխատավայրում աշխատելու թեկնածու ընդգրկված չլինելու հանգամանքը՝ Փաստաբանների պալատը նախատեսում է թափուր հաստիքը համալրել «Փաստաբանության մասին» օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով:

Նշվածի հաշվառմամբ՝ առաջարկում ենք հանրային պաշտպանի գրասենյակի Լոռու մարզը սպասարկող հանրային պաշտպանի թափուր հաստիքը համալրելու ցանկություն ունեցող փաստաբաններին այդ մասին տեղեկացնել Փաստաբանների պալատին՝ մինչև 2021թ սեպտեմբերի 26-ն ուղարկելով հաղորդագրություն deputychairman2@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին՝ կցելով ինքնակենսագրական տվյալներ (CV):

Հայաստանի Հանրապետության

փաստաբանների պալատի

աշխատակազմ